ԱՓ 08/00-01

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ
(World Bank)

Հեղինակներ՝

Մարգարիտ Մամիկոնյան և Լուսինե Հարությունյան

Դրամավարկային քաղաքականության վարչություն

ԵՐԵՎԱՆ 2000

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ
(World Bank)

Մ. Մամիկոնյան, Լ. Հարությունյան

Համաշխարհային բանկը ներառում է 2 խոշոր կազմակերպություն՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (International Bank for Reconstruction and Development) և Զարգացման միջազգային ընկերակցությունը (International Development Association): Համաշխարհային բանկի խմբի մեջ են մտնում են նաև մի շարք այլ կազմակերպություններ, որոնք իրավաբանորեն և ֆինանսապես նրանից անկախ են: Դրանք են՝ Միջազգային ֆինանսական կորպորացիան (International Finance Corporation), Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությունը (Multilateral Investment Guarantee Agency) և Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնը (International Centre for the Settlement of Investment Disputes):

Անդամ-երկրներում Համաշխարհային բանկի գործունեության կարևորագույն միջինժամկետ և երկարաժամկետ նպատակներն են.

- աջակցել տնտեսական բարեփոխումներին՝ կայուն տնտեսական աճի խթանման և աղքատության կրճատման նպատակով,
- իրականացնել ներդրումներ մարդկային ռեսուրսներում՝ կրթության, առողջապահության, սննդի և ընտանիքի ոլորտներում առավել ընդգրկուն և արդյունավետ ծրագրերի իրականացման միջոցով,
- պահպանել շրջակա միջավայրն այնպես, որ տնտեսական աճն ու աղքատության կրճատումը լինեն երկարատև՝ արդի և ապագա սերունդների համար,
- խթանել մասնավոր հատվածի զարգացումը՝ անդամ-երկրներում ներդրումները խթանելու, արտադրողականությունը բարձրացնելու և նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով,
- վերաձևավորել հանրային հատվածի կառավարումն այնպես, որպեսզի այն լրացնի մասնավոր հատվածի գործունեությունը և արդյունավետորեն իրականացնի մարդկային ռեսուրսների զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, սոցիալական պաշտպանվածությանը և օրենսդրական ու նորմատիվային դաշտի ապահովմանն ուղղված խնդիրները:

Ելնելով վերոնշյալ նպատակներից՝ Համաշխարհային բանկն անդամ-երկրներում իրականացնում է երկու կարևոր գործառույթներ.

- ֆինանսական. զարգացման համար հավաքագրում և ներդնում է զգալի ռեսուրսներ,
- խորհրդատվական. իրականացնում է տարբեր երկրների տնտեսությունների վերլուծական հետազոտություններ, և բազմաբնույթ հրապարակումների ձևով տարածում այդ հետազոտությունների արդյունքները:

Համաշխարհային բանկի խմբին բաժին է ընկնում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից զարգացող երկրներին տրամադրվող վարկային ռեսուրսների ընդհանուր ծավալի 2/3-ը: Նա հիմնականում գործում է երկրների կառավարությունների հետ, քանի որ, համաձայն Համաշխարհային բանկի Համաձայնագրի հոդվածների, նա կարող է վարկավորել միայն անդամ-երկրների կառավարություններին կամ վերջիններիս երաշխիքի առկայության դեպքում:

80-ական թվականներից սկսած Համաշխարհային բանկն ու Արժույթի միջազգային հիմնադրամը առանցքային դեր ունեն արտաքին պարտքի ճգնաժամերի կարգավորման գործում, որն իրականացվում է հետևյալ կերպ.

- միջպետական մակարդակով քննարկվում են պարտքի կարգավորման նախագծերը,
- պարտք ունեցող երկրին օգնում են՝ ներգրավելու օտարերկրյա ֆինանսական միջոցներ,
- առաջարկվում են արտաքին պարտքային ճգնաժամի մեջ գտնվող երկրի տնտեսական կառուցվածքի բարեփոխման և զարգացման արդյունավետ տարբերակներ:

ԱՄՀ-ն մասնագիտացված է կարճաժամկետ ծրագրերի, իսկ Համաշխարհային բանկը՝ երկարաժամկետ ծրագրերի ֆինանսավորման գծով: Երկուսն էլ նպատակ ունեն մասնակից երկրների տնտեսությունները հարմարեցնել միջազգային տնտեսական շուկայի փոփոխություններին,

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշման հետ:*


ինչպես նաև բարձրացնել նրանց մասնակցության արդյունավետությունն աշխատանքի միջազգային բաժանմանը և ապահովել արտաքին վճարումների անխափանությունը: ԱՄՀ-ում մասնակից երկրի ձայների թիվը կախված է տվյալ երկրի տնտեսական հզորությունից ու ազգային արժույթի կայունությունից և որոշվում է ներդրված կապիտալում մասնակցության չափով (քվոտայով): Համաշխարհային բանկի խմբի մեջ մտնող կազմակերպություններում երկրների բաժնետոմսերի չափը կախված է համաշխարհային տնտեսության համեմատ տվյալ երկրի տնտեսության մեծությունից:

Համաշխարհային բանկի խմբի հաստատությունների ֆինանսական տարին սկսվում է հուլիսի 1-ից և ավարտվում հունիսի 30-ին:

Ֆինանսական և խորհրդատվական գործառույթների համակցումը Համաշխահային բանկին տալիս է համեմատական առավելություն: Սակայն սրանցից յուրաքանչյուրի առաջնությունը որևէ երկրում կախված է տվյալ երկրում տիրող իրավիճակից:

Հայաստանում Համաշխարհային բանկի ռազմավարության առաջնային ոլորտներն են.

- տնտեսական կառավարման բարելավումը,
- ներքին ռեսուրսների հավաքագրումը, հարկային համակարգի բարելավումը,
- ձեռնարկությունների կառուցվածքային բարեփոխումները, մասնավորապես՝ սեփականաշնորհումը և հանրային (պետական) ձեռնարկությունների վերակառուցումը,
- ֆինանսական հատվածի բարեփոխումը:



Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ *(IBRD)*

Ստեղծումը, գործունեության նպատակները և խնդիրները

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ ՎԶՄԲ) առաջին միջպետական ներդրումային կազմակերպությունն է, որը ստեղծվել է ԱՄՀ հետ միաժամանակ, Միացյալ ազգերի կազմակերպության միջազգային արժութային-ֆինանսական համաժողովի որոշմամբ, 1944 թվականին, Բրետոն-Վուդսում (ԱՄՆ): ՎԶՄԲ համաձայնագիրը, որը միաժամանակ նրա կանոնադրությունն է, ուժի մեջ է մտել 1945 թվականի դեկտեմբերի 27-ից, մինչդեռ ՎԶՄԲ-ն իր գործունեությունը սկսել է 1946 թվականի հունիսի 25-ից: Այն պայմանականորեն հանդիսանում է ՄԱԿ-ի մասնագիտացված ֆինանսական հիմնարկությունը:

Ստեղծված լինելով ԱՄՆ-ի ֆինանսական կապիտալի նախաձեռնությամբ՝ ՎԶՄԲ-ն իր գործունեության սկզբնական շրջանում կոչված էր խթանելու մասնավոր ներդրումները Երկրորդ համաշխարհային պատերազմից քայքայված արևմտաեվրոպական երկրներում՝ զարգացած երկրների բյուջետային միջոցների հաշվին և ամերիկյան ներդրողներից ներգրաված կապիտալի միջոցով:

50-ական թվականների կեսից արևմտաեվրոպական երկրներում դրությունը կայունանում է և ՎԶՄԲ-ն դառնում է Համաշխարհային բանկի խմբի հիմնական վարկավորող կազմակերպությունը և զարգացող երկրների գլխավոր ֆինանսական հենարանը:

Ներկայումս ՎՋՄԲ-ի գլխավոր նպատակներն են՝ կայուն տնտեսական զարգացման խթանումը և աղքատության կրճատումը, որոնց իրագործման համար նա վարկեր, երաշխիքներ և դրանց հետ կապված տեխնիկական օգնություն է տրամադրում ՎՋՄԲ-ի անդամ հանդիսացող զարգացող երկրներին՝ նախագծերի և ծրագրերի իրագործման նպատակով:

Միջազգային կապիտալի շուկաներից միջոցների ներգրավումը և դրանք իր անդամ զարգացող երկրներին տրամադրելու ՎՋՄԲ-ի ունակությունը նպատակներին հասնելու կարևոր գործոն է: ՎՋՄԲ-ի նպատակը շարունակական հիմքով պատշաճ մակարդակի զուտ եկամտի ստացումն է՝ ֆինանսապես ամուր լինելու և գործողությունների կայուն զարգացում ապահովելու համար:

ՎՋՄԲ-ի ֆինանսական կայունությունը պայմանավորված է բաժնետերերի աջակցությամբ և իր կողմից վարվող ֆինանսական քաղաքականության արդյունավետությամբ:

ՎՋՄԲ-ն վարկավորում է 1 շնչի հաշվով միջին եկամուտ ունեցող և վարկունակ աղքատ երկրներին*: Նրա վարկային միջոցներն օգտագործվում են զարգացման այնպիսի ծրագրերի ֆինանսավորման համար, ինչպիսիք են մայրուղիների, դպրոցների և հոսպիտալների կառուցումը: ՎՋՄԲ-ն ֆինանսավորում է նաև այն ծրագրերը, որոնց օգնությամբ կառավարությունները փոխում են իրենց տնտեսությունների կառավարման ձևը:

1999 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՎՋՄԲ-ի կազմի մեջ մտնում էր 181 երկիր: Նրան անդամակցելու նախնական պայմանը տվյալ երկրի անդամակցությունն է ԱՄՀ-ին: Անդամակցության վճարի չափն արտացոլում է նրա քվոտան ԱՄՀ-ում, որն էլ իր հերթին արտացոլում է տվյալ երկրի համեմատական տնտեսական հզորությունը համաշխարհային տնտեսությունում:

Կազմակերպական կառուցվածքը

ՎՋՄԲ-ի ղեկավար մարմիններն են Կառավարիչների Խորհուրդը և Տնօրենների Խորհուրդը (գործադիր մարմին): Կառավարիչների Խորհուրդը, որը կազմված է անդամ-երկրների ֆինանսների նախարարներից կամ կենտրոնական բանկերի նախագահներից, տարեկան առնվազն մեկ անգամ հավաքվում է իր տարեկան նիստին, ընդ որում, ՎՋՄԲ-ն և ԱՄՀ-ն այդ նիստերն անցկացնում են համատեղ: Քանի որ ՎՋՄԲ-ի անդամ-երկրները միաժամանակ անդամակցում են ԱՄՀ-ին, ուստի պարտավոր են իրենց արժութային-ֆինանսական քաղաքականությունն իրականացնել ԱՄՀ-ի Կանոնադրությանը համապատասխան:

ՎՋՄԲ-ի ղեկավար մարմիններում ձայնի իրավունքը որոշվում է անդամակցության վճարի չափով՝ ըստ ԱՄՀ-ում միջին կշռված ձայների համակարգի: Այդ պատճառով, թեև ներկայումս ՎՋՄԲ-ի կազմի մեջ մտնում է 181 երկիր, նրա կազմակերպական կառուցվածքը խոշոր զարգացած երկրների ոչ մեծ խմբին ապահովում է առաջատար դիրք: Յոթ երկիր՝ ԱՄՆ (264,969 բաժնետոմս), Ճապոնիա (127,000), Գերմանիա (72,399), Անգլիա (69,397), Ֆրանսիա (69,397), Կանադա (44,795) Իտալիա (44,795), տնօրինում են ՎՋՄԲ-ի Կառավարիչների խորհրդում բոլոր ձայների շուրջ 45%-ը: Եթե դրան միացնենք Չինաստանի (44,799) ու Հնդկաստանի (44,795) կամ Սաուդյան Արաբիայի (44,795) ու Ռուսաստանի (44,795) ձայները, ապա երկրների վերոնշյալ խումբը կունենա «վետտո»-ի իրավունք: Ընդ որում, առավել կարևոր հարցերի վճռման դեպքում պահանջվում է ձայների որակական մեծամասնություն (ընդհանուր թվի ավելի քան 80%-ը):

ՎՋՄԲ-ի գլխավոր գրասենյակը գտնվում է Վաշինգտոնում, ներկայացուցչական գրասենյակները՝ անդամ-երկրներում՝ այդ երկրների տեղական գործարար շրջանակների հետ կապերն ամրապնդելու համար:

Ռեսուրսների ձևավորումը

ՎՋՄԲ-ի ռեսուրսները ձևավորվում են անդամ-երկրների կողմից վճարված կապիտալից, միջազգային ֆինանսական շուկայից ներգրավված փոխառություններից, նախկինում տրամադրված վարկերի մարումներից և եկամուտներից:

Անդամ-երկրների կողմից ՎՋՄԲ-ի բաժնետոմսերին բաժանորդագրվելու ճանապարհով ձևավորվող կանոնադրական կապիտալը սկզբնական շրջանում չէր գերազանցում 10 մլրդ ԱՄՆ դոլարը: Երբ ՎՋՄԲ-ի գործունեությունը վերակողմնորոշվեց դեպի զարգացող երկրներ, նրա ղեկավարությունը որոշում ընդունեց ընդլայնել վարկային ռեսուրսները: 1999 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՎՋՄԲ-ի հայտարարած կանոնադրական կապիտալը կազմում էր 1,581,724 բաժնետոմս (190.81 մլրդ ԱՄՆ դոլար), որից փաստացի բաժանորդագրված էր 1,560,243 բաժնետոմս՝ 188.22 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Յուրաքանչյուր բաժնետոմս ունի 100,000 ՍԴՌ անվանական արժեք, որը հաշվարկվում է 1974 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ԱՄՆ դոլար/ՍԴՌ փոխարժեքով (1.20635): Այսպիսով, յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 120,635 ԱՄՆ դոլար:

** 2000 թ. ֆինանսական տարում ՎՋՄԲ վարկերից օգտվող երկրների թվում ամենացածր եկամուտ ունեցողը Չինաստանն է (1 շնչի հաշվով եկամուտը կազմում է 750 ԱՄՆ դոլար), իսկ ամենաբարձր եկամուտ ունեցող երկիրը՝ Սլովենիան (1 շնչի հաշվով եկամուտը կազմում է 9760 ԱՄՆ դոլար):*

Ըստ ՎԶՄԲ-ի Համաձայնագրի, յուրաքանչյուր անդամ-երկիր անդամակցության սկզբնական շրջանում վճարում է անդամավճարի 20 %-ը, որից 2 %-ը վճարում է ոսկով կամ ԱՄՆ դոլարով, իսկ մնացած 18 %-ը վճարում է անդամ-երկրի արժույթով: Ազգային արժույթով անդամավճարի վճարումը կարող է իրականացվել նաև անդամ-երկրի կառավարության պարտավորագրերով, որոնք պետք է լինեն ոչ փոխանցելի, ոչ տոկոսաբեր և վճարելի իրենց անվանական արժեքով: Սա այն երաշխիքային ֆոնդն է, որի հիման վրա ՎԶՄԲ-ն միջազգային կապիտալի շուկայում միջոցներ է փոխառում իր վարկային գործառնություններն իրականացնելու համար: 1999 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՎԶՄԲ-ի առաջնահերթ վճարման ենթակա բաժնետիրական կապիտալից վճարված էր 11.4 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ մնացած 176.8 մլրդ ԱՄՆ դոլարը նա կարող է պահանջել իր պարտավորությունների՝ փոխառությունների կամ երաշխավորված վարկերի անհապաղ մարման անհրաժեշտության դեպքում:

ՎԶՄԲ-ն վարկավորման համար անհրաժեշտ միջոցների մեծ մասը ներգրավում է միջազգային ֆինանսական շուկաներից՝ ներդրողներին վաճառելով իր կողմից թողարկված պարտատոմսերը: ՎԶՄԲ-ն վարկերի գծով պարտքի վերաձևակերպումներ չի իրականացնում: Վարկավորման պահպանողական քաղաքականության, իր կողմից տրամադրված վարկերի խիստ վերադարձելիության և սահուն ֆինանսական կառավարման շնորհիվ ՎԶՄԲ-ն միջազգային կապիտալի շուկայում ունի բարձր վարկանիշ:

Որպես միջնորդ ՎԶՄԲ-ն աջակցում է զարգացած երկրներից դեպի նոր զարգացող երկրներ կապիտալի արտահոսքին և մասնավոր ներդրողներին տրամադրում ՎԶՄԲ-ի և անդամ-երկրների կառավարությունների երաշխիքներ, որոնց շնորհիվ մասնավոր բանկերը և ֆինանսավարկային այլ հաստատություններ վստահորեն ներդնում են իրենց կապիտալը ՎԶՄԲ-ի բաժնետոմսերում: Այդ բաժնետոմսերից ստանալով բարձր եկամուտ (տարեկան միջինն ավելի քան 9 %)՝ ներդրողներն ապահովվում են ցանկացած ռիսկից: Դրանով իսկ ՎԶՄԲ-ն ազդում է կապիտալի երկարաժամկետ հոսքերի վրա:

ՎԶՄԲ-ն փոխառու կապիտալի միջազգային շուկայում խոշոր վարկառու է: Նա պարտատոմսեր և այլ պարտքային արժեթղթեր է վաճառում տարբեր երկրներում կենսաթոշակային, ապահովագրական ընկերություններին, կորպորացիաներին, այլ բանկերի և անհատ անձանց: Միջպետական ներդրումային բանկերի կողմից թողարկվող պարտատոմսային փոխառությունների ընդհանուր ծավալում ՎԶՄԲ-ն ունի ամենամեծ տեսակարար կշիռը: Մինչև 1999 թվականի հունիսի 30-ը ՎԶՄԲ-ն հավանություն էր տվել 128 երկրի 302.84 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ վարկային ծրագրերի (բացառությամբ չեղյալ համարվածները), որոնց ավելի քան 90 տոկոսը միջին և երկարաժամկետ փոխառություններ են: 1999 ֆինանսական տարում 39 երկրի տրամադրվել են 22.2 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ փոխառություններ:

Վարկային քաղաքականությունը, ակտիվ գործառնությունների բնութագիրը

ՎԶՄԲ-ի վարկային գործառնությունների հիմքում ընկած է Համաձայնագրի հոդվածներից բխող 5 սկզբունք: Այդ սկզբունքներով ՎԶՄԲ-ն փորձում է անդամ-երկրներում ապահովել ֆինանսական և տնտեսական սահուն միջավայր՝ վարկավորելով այն ոլորտները, որոնք այդ երկրներում ունեն գերակայություն: ՎԶՄԲ վարկային գործառնությունների հիմքում ընկած սկզբունքներն են.

- ՎԶՄԲ-ն իր անդամ-երկրներում վարկավորում է կառավարություններին, կառավարական իշխանություններին կամ մասնավոր ձեռնարկություններին,
- վարկերը տրամադրում է տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման համար և տվյալ երկրի կառավարության երաշխավորությամբ,
- փոխառուն ստանում է վարկ, եթե նա հնարավորություն չունի այն ստանալ որևէ այլ մասնավոր աղբյուրից՝ տոկոսադրույքների բարձր լինելու պատճառով,
- ՎԶՄԲ-ի փորձագիտական հանձնաժողովը գնահատում է ծրագիրը և տալիս իր համաձայնությունն այն իրագործելու համար,
- միջոցների օգտագործումը խիստ նպատակային բնույթ է կրում և իրականացվում է փուլերով:

ՎԶՄԲ-ի վարկային քաղաքականությունը բխում է զարգացող երկրներում գործող մասնավոր կապիտալի շահերից, որն արտահայտվում է անդամ-երկրների կողմից բանկային վարկ ստանալու հայտերի քննարկման ընթացակարգում: Վարկային նախագծերի քննարկման ժամանակ ՎԶՄԲ-ն պահանջում է ամենաընդարձակ տեղեկատվություն այդ երկրների տնտեսական և ֆինանսական դրության մասին և ուղարկում տնտեսական փորձագետների խումբ՝ բաղկացած հիմնականում զարգացած արդյունաբերություն ունեցող երկրների ներկայացուցիչներից: Խումբն իրականացնում է անդամ-երկրների տնտեսության և ֆինանսական իրավիճակի հետազոտություններ, ինչպես նաև օգնում սոցիալ-տնտեսական զարգացման պլանների կազմմանն ու իրագործմանը: ՎԶՄԲ-ն կարևորություն է տալիս մասնավոր հատվածի զարգացման և զարգացող երկրների կողմից օտարերկրյա կապիտալի ներգրավվման խնդիրներին: ՎԶՄԲ-ն հիմնականում ֆինանսավորում է վարկավորվող օբյեկտների ընդհանուր արժեքի միայն

30 տոկոսը, իսկ մնացած ծախսերը ֆինանսավորվում են ներքին կամ արտաքին այլ աղբյուրների հաշվին:

ՎԶՄԲ-ն զարգացող երկրների պետական ձեռնարկություններին վարկավորում է այն դեպքում, երբ վստահ է, որ տվյալ երկրի կառավարությունն ըստ ամենայնի աջակցում է մասնավոր ձեռներեցության զարգացմանը: ՎԶՄԲ-ն, նպատակ ունենալով ստեղծել նպաստավոր ներդրումային մթնոլորտ ազգային և օտարերկրյա կապիտալի գործունեության համար, ֆինանսավորում է էներգետիկայի, տրանսպորտի, կապի և ենթակառուցվածքային այլ ճյուղերի զարգացման հեռանկարային ծրագրերը: ՎԶՄԲ վարկային միջոցների գրեթե կեսը ներդրված է այնպիսի ճյուղերում, որտեղ մասնավոր ներդրողները դժկամությամբ են ներդնում իրենց կապիտալը: Նմանատիպ վարկային քաղաքականություն է իրականացվում գյուղատնտեսության բնագավառում, քանի որ գյուղատնտեսությունը մյուս ճյուղերից տարբերվում է մեծ կապիտալատարությամբ և համեմատաբար ցածր շահութաբերությամբ: Գյուղատնտեսության ոլորտին բաժին է ընկնում ՎԶՄԲ վարկային ներդրումների ավելի քան 20 %-ը: Ընդ որում, ագրարային հատվածի վարկավորման ժամանակ ՎԶՄԲ-ն համագործակցում է Զարգացման միջազգային ընկերակցության հետ, որն այդ հատվածում է ներդնում իր արտոնյալ վարկերի գերակշիռ մասը:

ՎԶՄԲ ռեսուրսների մինչև 20 %-ն ուղղվում է արդյունաբերության վարկավորմանը: Զարգացող երկրներում արդյունաբերական հատվածի միջին և մանր մասնավոր ձեռնարկությունները վարկավորվում են հիմնականում տեղական առևտրային բանկերի միջոցով:

ՎԶՄԲ վարկերի գերակշռող մասը տրամադրվում է 12 - 20 տարի ժամկետով, ընդ որում, արտոնյալ ժամկետը (վարկի հիմնական գումարի մարման հետաձգման ժամկետը) սովորաբար կազմում է 3-5 տարի: Գործնականում նա չի վերաձևակերպում իր վարկային պայմանագրերը և թույլ չի տալիս հետաձգել վճարումներն իր կողմից տրամադրված վարկերի գծով: Վարկերի տրամադրման ամենակարճ ժամկետները բնորոշ են արդյունաբերության զարգացմանն ուղղվող վարկերին:

ՎԶՄԲ կախվածությունը փոխառու կապիտալի շուկայից բացասաբար է անդրադառնում իր կողմից տրամադրվող վարկերի արժեքի վրա: Փոխառու միջոցները ստանալով բարձր տոկոսադրույքներով՝ զարգացող երկրներին նույնպես վարկավորում է համեմատաբար բարձր տոկոսադրույքով: Մինչև 1982 թվականը կիրառվում էր ամրագրված տոկոսադրույք: Սկսած1982 թվականից տոկոսադրույքը որոշվում է հետևյալ կերպ. փոխառությունների միջին ծախքին* գումարվում է որոշակի մարժա: Մինչև 1998 թվականի հուլիսի 31-ը մարժան կազմում էր 50 բազիսային կետ (տոկոսադրույքը՝ 5.59), իսկ 1998 թվականի հուլիսի 31-ից հետո կնքված վարկային պայմանագրերի համար՝ 75 բազիսային կետ (տոկոսադրույքը՝ 5.84): Վարկերի տոկոսադրույքները փոփոխվում են 6 ամիսը մեկ անգամ:

Մի շարք զարգացող երկրներում, վճարունակության ճգնաժամի կտրուկ խորացման պատճառով, ՎԶՄԲ-ն ակտիվացրել է իր գործունեությունը՝ օգտագործելով մի շարք նոր ընթացակարգեր, ծրագրեր և նախաձեռնություններ: Դրանց թվում կարևոր տեղ է գրավում համատեղ ֆինանսավորումը, որին ՎԶՄԲ հետ միասին մասնակցում են նաև այլ վարկատուներ: 1999թ. ֆինանսական տարում ՎԶՄԲ-ի համատեղ ֆինանսավորման/վարկավորման գործակիցը կազմում էր 39.1 տոկոս, իսկ խոշորագույն գործընկերներն էին Միջամերիկյան զարգացման բանկը՝ 4,608 մլն ԱՄՆ դոլար, Ճապոնիան՝ 2,018 մլն ԱՄՆ դոլար, Եվրոպական Միության տարածքում գործող հաստատությունները՝ 491 մլն ԱՄՆ դոլար, Աֆրիկյան զարգացման բանկը՝ 473 մլն ԱՄՆ դոլար և Մեծ Բրիտանիան՝ 323 մլն ԱՄՆ դոլար: Համատեղ ֆինանսավորմանը մասնակցող ներդրողները շահում են, քանի որ ՎԶՄԲ-ն ապահովում է ծրագրերի փորձաքննությունը, հաստատում ֆինանսավորման ծավալները, և, որ ամենակարևորն է, նվազեցնում չվճարման ռիսկը: Սակայն համատեղ ֆինանսավորման դեպքում վարկավորման պայմանները խստանում են, այսինքն՝ փոխառու միջոցները թանկանում են, իսկ վարկի մարման ժամկետները կրճատվում:

---

* *ՎԶՄԲ փոխառությունների միջին ծախքը նախորդ կիսամյակում ՎԶՄԲ կուտակային փոխառությունների միջին կշռված տոկոսադրույքն է՝ հաշվարկված փոխառությունների պորտֆելում առկա արժույթների տեսակարար կշիռներով:*

ՎՋՄԲ կողմից նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ֆինանսավորման ծավալները

30.06.99 թ.

Երկիր	*Ընդամենը ստորագրված պայմանագրեր*	*Գումարը (մլն ԱՄՆ դոլար)*	*Տեսակարար կշիռը (%)*
Հայաստան	1	12.0	0.1
Ադրբեջան	-	-	-
Վրաստան	-	-	-
Ռուսաստանի Դաշնություն	42	11721.5	65.2
Ուկրաինա	16	2821.8	15.7
Բելառուս	3	170.2	0.9
Մոլդովա	9	302.8	1.7
Էստոնիա	7	125.7	0.7
Լատվիա	14	314.9	1.8
Լիտվա	12	293.3	1.6
Ղազախստան	20	1679.1	9.4
Ուզբեկստան	9	434.0	2.4
Ղրղզստան	-	-	-
Թուրքմենստան	3	89.5	0.5
Տաջիկստան	-	-	-
Ընդամենը	**136**	**17964.8**	**100**

ՎՋՄԲ-ի և Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները

1999 թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի բաժնեմասը ՎՋՄԲ-ում կազմում էր 1139 բաժնետոմս՝ 137.4 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ: Պարտադիր վճարման ենթակա է 5.9 մլն ԱՄՆ դոլարը (4.3 %), իսկ մնացած 131.5 մլն ԱՄՆ դոլարը Հայաստանի կողմից պետք է վճարվի ՎՋՄԲ-ի պահանջի դեպքում: 1999 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունը ՎՋՄԲ-ին տրամադրել է երեք պարտամուրհակ (1992 թ. սեպտեմբերի 15-ին, 1996 թ. մայիսի 5-ին և 1998 թ. հունիսի 29-ին)՝ 2,723,850,014 դրամ ընդհանուր արժողությամբ: Հայաստանի քվեների թիվը կազմում է 1389 ձայն, որը ընդհանուր քվեների թվի 0.09 %-ն է[*]:

1993 թ. ապրիլի 7-ին ՀՀ կառավարության և ՎՋՄԲ միջև կնքվել է վարկային պայմանագիր, ըստ որի ՀՀ կառավարությանը տրամադրվել է 12 մլն ԱՄՆ դոլար՝ կառուցվածքային բարեփոխումների համար: Վարկային ծրագրի նպատակն է՝ աջակցել ՀՀ կառավարությանը տնտեսական բարեփոխումների ինստիտուցիոնալ բազան ամրապնդելու գործում: Այս նպատակով մշակվել են գործառութային 4 ոլորտների՝ (1) տնտեսական կառավարմանը, (2) ռեսուրսների հավաքագրմանը, (3) ձեռնարկությունների և (4) ֆինանսական համակարգի բարեփոխմանն աջակցող ծրագրեր: Տնտեսական կառավարմանն աջակցող ծրագիրը ներառում է տնտեսական քաղաքականության մշակման և այդ գործում օգնության կոորդինացման կազմակերպման միջոցառումներ: Ռեսուրսների հավաքագրմանն աջակցող ծրագիրը ներառում է հարկային ոլորտի գործունեության բարելավման (խորհրդատվական ծառայությունների մատուցման, վերապատրաստման և կոմպյուտերացման միջոցով) և միջազգային ստանդարտներին համապատասխանող մաքսային կառավարման համակարգի ստեղծման միջոցառումներ: Ձեռնարկությունների բարեփոխման ծրագրով նախատեսված միջոցառումներն ուղղված են ձեռնարկությունների սեփականաշնորհման և վերակառուցման գործընթացի աջակցմանը: Ֆինանսական ոլորտի բարեփոխման ծրագիրը ներառում է այդ ոլորտի գործունեության համար անհրաժեշտ ենթակառույցների ստեղծմանն աջակցող միջոցառումներ՝ փորձագիտական օգնություն, կադրերի վերապատրաստում և տեխնիկական վերազինում:

Վարկը տրամադրվել է 20 տարի ժամկետով՝ ներառյալ 5 տարի արտոնյալ ժամկետը: Վարկի օգտագործված մասի դիմաց տոկոսավճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում Լոնդոնյան միջբանկային 6-ամսյա դեպոզիտների առաջարկի տոկոսադրույքը (LIBOR+0.8 %):

Վարկի հիմնական գումարի մարումն իրականացվում է 1998 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2013 թվականի մարտի 15-ը: Տոկոսագումարների վճարումն իրականացվում է 1993 թվականի սեպտեմբերից՝ հիմնական գումարի մարման գրաֆիկին համապատասխան:

1999 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային պայմանագրով բաշխվել է շուրջ 10.7 մլն ԱՄՆ դոլար: Մարվել է 0.56 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումար:[**]

---

[*] *«Համաշխարհային բանկի տարեկան հաշվետվություն» (անգլ.), 1999 թ. էջ 275:*

[**] *ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների համաձայն:*

Զարգացման միջազգային ընկերակցություն (IDA)

Ստեղծումը, գործունեության նպատակը և խնդիրները

Զարգացման միջազգային ընկերակցությունը (այսուհետ՝ Ընկերակցություն) հիմնվել է 1960 թվականի սեպտեմբերի 24-ին՝ «Զարգացման միջազգային ընկերակցության մասին» Համաձայնագրի հիման վրա: Ընկերակցությունը Համաշխարհային բանկի երկրորդ մասնաճյուղն է, որի նպատակն է՝ խթանել Ընկերակցության անդամ հանդիսացող թույլ զարգացած երկրների տնտեսական զարգացումը՝ նրանց արտոնյալ պայմաններով ֆինանսական միջոցներ տրամադրելու միջոցով: Նա օգտվում է ՄԱԿ-ի մասնագիտացված հիմնարկության կարգավիճակից:

1999 թվականի հունիսի 30-ի դրությամբ Ընկերակցությանն անդամակցում էր 160 երկիր:

Կազմակերպական կառուցվածքը

Ընկերակցությանն անդամակցելու առաջին պայմանը տվյալ երկրի անդամակցությունն է ՎՋՄԲ-ին: Ընկերակցությունը ՎՋՄԲ հետ ունի ընդհանուր ղեկավար մարմիններ: Որոշումներն ընդունվում են ձայնի իրավունք ունեցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ընկերակցությունում ձայների բաշխման սկզբունքը էապես տարբերվում է ՎՋՄԲ-ից և Միջազգային ֆինանսական կորպորացիայից. բազային ձայների թիվը 500 է, իսկ լրացուցիչ ձայների թիվը հաշվարկվում է՝ յուրաքանչյուր 5000 ԱՄՆ դոլար բաժանորդագրությանը 1 ձայն սկզբունքով:

Ընկերակցությունն իրավաբանորեն և ֆինանսապես տարբերվում է ՎՋՄԲ-ից, սակայն երկու կազմակերպություններն էլ ունեն որոշակի միասնական անձնակազմ:

Ռեսուրսների ձևավորումը

Ընկերակցության գործունեությունը հիմնականում կրում է բարեգործական բնույթ. նրա շահույթը չափազանց քիչ է և գրեթե չի փոխհատուցում կատարված ծախսերը: Այդ հանգամանքի հետ է կապված նաև Ընկերակցության իրավակազմակերպական կարգավիճակը. Համաշխարհային բանկի խմբի կազմակերպություններից Ընկերակցությունը միակն է, որ չի հանդիսանում բաժնետիրական ընկերություն: Ընկերակցության ռեսուրսները կազմավորվում են կառավարությունների ֆինանսական օժանդակություններից, ՎՋՄԲ-ի շահույթից կատարվող մասհանումներից և տրամադրած վարկերի մարումներից:

Ըստ Ընկերակցությանը բաժանորդագրման ձևի, մասնակից երկրները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են 26 զարգացած կապիտալիստական երկրներ (որոնց թիվը կազմում է մասնակից երկրների ընդհանուր թվի շուրջ 1/6 մասը), Քուվեյթը և Ռուսաստանը. առաջին խմբի երկրները իրենց բաժնեմասը 100 %-ով վճարում են փոխարկելի արժույթով կամ ոսկով: Երկրորդ խմբի մեջ մտնում է 132 երկիր, որոնք իրենց բաժնեմասի միայն 10 %-ն են մուծում փոխարկելի արժույթով, իսկ մնացած մասը վճարում են ազգային արժույթով:

Ընկերակցության ռեսուրսների համալրման աղբյուր են հանդիսանում առաջին խմբի բոլոր և երկրորդ խմբի որոշ երկրների լրացուցիչ օժանդակությունները Ընկերակցությանը, ինչպես և ՎՋՄԲ-ի ֆինանսական աջակցությունը: Յուրաքանչյուր տարի ՎՋՄԲ-ն իր չբաշխված զուտ եկամտից և հավելուրդից Ընկերակցությանը փոխանցում է որոշակի գումար: Այսպես, օրինակ, 1998 թվականի հունիսի 30-ին ՎՋՄԲ-ն իր չբաշխված զուտ եկամտից Ընկերակցությանն է փոխանցել 5,735 մլն ԱՄՆ դոլար: 1998 թվականի հոկտեմբերի 8-ին որպես դրամաշնորհ ՎՋՄԲ-ին փոխանցվել է 352 մլն ԱՄՆ դոլար՝ չբաշխված զուտ եկամտից, և 142 մլն ԱՄՆ դոլար՝ իր հավելուրդից: Այս գումարները, համալրելով Ընկերակցության կապիտալ ռեսուրսները, նպաստում են նրա ֆինանսական դիրքի ամրապնդմանը:

Ընկերակցությունը ներգրավում է վարկավորման միջոցներ ՎՋՄԲ-ի անդամ հանդիսացող զարգացած երկրներից: 1998 թվականի հունիսի 30-ի դրությամբ Ընկերակցության անդամների կանոնադրական վճարներն ու հատկացումները կազմում էին 99,558 մլն ԱՄՆ դոլար:

Վարկային քաղաքականությունը, նրա ակտիվ գործառնությունների բնութագիրը

Ի տարբերություն ՎՋՄԲ-ի, Ընկերակցության գործունեությունը կրում է համալրող բնույթ: Այն կոչված է աջակցելու համեմատաբար աղքատ և վարկունակության պակաս ունեցող երկրների տնտեսական զարգացմանն ու կենսամակարդակի բարձրացմանը, այսինքն այն երկրների, որոնք տնտեսական զարգացման ցածր մակարդակի պատճառով ի վիճակի չեն օգտվել ՎՋՄԲ-ի կամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի ֆինանսական աջակցությունից: 2000 ֆինանսական

տարում այդ երկրների թվին կդասվեն 1 շնչի հաշվով մինչև 895 ԱՄՆ դոլար Համախառն ազգային արդյունք (ՀԱԱ) ունեցող երկրները, որոշ վերապահումներով[*]:

Ընկերակցությունը վարկեր է տրամադրում միայն անդամ-երկրների կառավարություններին: Վարկերը տրամադրվում են ծայրահեղ արտոնյալ պայմաններով՝ 35 - 40 տարի մարման ժամկետով և հաճախ գրեթե անհատույց՝ յուրաքանչյուր տարի որպես կոմիսիոն վճար գանձելով վարկի ամբողջ գումարի 0.75%-ի չափով: Արտոնյալ են նաև վարկի մարման պայմանները. մարումը սկսվում է վարկի ստացումից 10 տարի հետո: Ընկերակցության վարկերը տրամադրվում են անդամ-երկրների կառավարությունների երաշխավորությամբ:

1999 թվականի հունիսի 30-ի դրությամբ Ընկերակցությունն իր անդամ-երկրներին տրամադրել էր 115.9 մլրդ ԱՄՆ դոլարի զարգացման վարկեր, այդ թվում՝ 1999 ֆինանսական տարում՝ 6.8 մլրդ ԱՄՆ դոլար՝ 53 երկրի:

Ընկերակցության վարկերը հիմնականում ուղղվում են տնտեսական և սոցիալական ենթակառույցների զարգացմանը, թեպետ վերջին ժամանակներս առաջնությունը տրվում է գյուղատնտեսությանը:

Ընկերակցությունն իր պորտֆելի կառավարման ռազմավարությունն իրականացնում է՝ միջոցները ներդնելով պետական և ֆեդերալ գործակալությունների արժեթղթերում, ժամկետային դեպոզիտներում, ֆյուչերս, ֆորվարդ պայմանագրերում, օպցիոններում:

Առանձին կամ ՎԶՄԲ հետ համատեղ, դոնորների, այդ թվում՝ նաև իր անդամ-երկրների գործակալությունների և այլ ձեռնարկությունների անունից Ընկերակցությունը ստեղծում է ֆոնդեր, որոնց միջոցներն օգտագործվում են խիստ նպատակային, այն է՝ օգտագործվում են համատեղ ֆինանսավորման, Ընկերակցության անդամների պարտքային պարտավորությունների նվազեցման և փոխառուներին ցուցաբերվող տեխնիկական օգնության, ինչպես նաև հետազոտական ու ուսուցողական ծրագրերի ֆինանսավորման համար: Այս ֆոնդերը չեն մտնում Ընկերակցության զարգացման ռեսուրսների մեջ և հաշվառվում են առանձին: Ընդհանուր առմամբ Համաշխարհային բանկի խմբի երկու հիմնական հաստատությունների վարկային գործունեությունը զգալիորեն շահութաբեր է, չնայած այն հանգամանքին, որ միջոցների մի մասը տրամադրվում է գրեթե անվճար:

Ընկերակցությունը ՎԶՄԲ կողմից կատարված վարչական ծախսերի դիմաց կատարում է կառավարման վճար:

ԶՄԸ կողմից նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ֆինանսավորման ծավալները

30.06.1999 թ.

Երկիր	*Ընդամենը ստորագրված պայմանագրեր*	*Գումարը (մլն ԱՄՆ դոլար)*	*Տեսակարար կշիռը (%)*
Հայաստան	18	494.3	22.5
Ադրբեջան	12	369.2	16.8
Վրաստան	22	509.6	23.2
Ռուսաստանի Դաշնություն	-	-	-
Ուկրաինա	-	-	-
Բելառուս	-	-	-
Մոլդովա	6	146.0	6.6
Էստոնիա	-	-	-
Լատվիա	-	-	-
Լիտվա	-	-	-
Ղազախստան	-	-	-
Ուզբեկստան	-	-	-
Ղրղզստան	18	500.0	22.7
Թուրքմենստան	-	-	-
Տաջիկստան	10	180.3	8.2
Ընդամենը	**86**	**2199.4**	**100**

Հայաստանի Հանրապետության և Ընկերակցության փոխհարաբերությունները

Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է Զարգացման միջազգային ընկերակցությանը 1992 թվականի ապրիլի 21-ից:

1998 թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի բաժնեմասը Ընկերակցության կանոնադրական կապիտալում կազմել է 584,000 ԱՄՆ դոլար: Հայաստանի Հանրապետությունը Ընկերակցությանը տրամադրել է մեկ պարտամուրհակ (1998 թ. մայիսի 19-ին)՝ 4,363,016 դրամ ընդհանուր

[*] *«Համաշխարհային բանկի տարեկան հաշվետվություն» (անգլ.), 1999, էջ 203:*

արժողությամբ: Հայաստանի քվեների թիվը կազմում է 2717 ձայն, որը ընդհանուր քվեների թվի 0.20 %-ն է:

Վարկեր

Անդամակցման օրվանից մինչև 1999 թ. սեպտեմբերի 30-ը ՀՀ կառավարության և Ընկերակցության միջև կնքվել են 18 վարկային պայմանագրեր՝ շուրջ 480 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Վարկերը տրամադրվել են 35 տարի ժամկետով՝ ներառյալ 10 տարի արտոնյալ ժամկետը: Վարկերն անտոկոս են: Հիմնական գումարի մարումն իրականացվում է 25 տարիների ընթացքում, տարեկան երկու անգամ, կիսամյակային վճարումների ձևով: Հիմնական գումարի մարման առաջին 10 տարիների ընթացքում յուրաքանչյուր հերթական վճարում կատարվում է հիմնական գումարի 1.25 %-ի չափով, իսկ հաջորդ 15 տարիների ընթացքում՝ հիմնական գումարի 2.5 %-ի չափով: Վարկի տրամադրման պահից, տարեկան երկու անգամ, կիսամյակային վճարումների ձևով, Ընկերակցությանը վճարվում է միայն վարկի սպասարկման վճար՝ հիմնական գումարի օգտագործված մասի 0.75 %-ի չափով:

Եթե ՀՀ բնակչության մեկ շնչին ընկնող ՀԱԱ-ն հաջորդող հինգ տարիների ընթացքում գերազանցի 790 ԱՄՆ դոլարը՝ 1985 թ. ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքով, Ընկերակցությունն իրավունք ունի վերանայելու հիմնական գումարի մարման պայմանները և գրաֆիկը:

Աղետի գոտու վերականգնման վարկ

1994 թ. փետրվարի 18-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, համաձայն որի աղետի գոտու վերականգնման ծրագրի ֆինանսավորման համար Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 20.1 մլն ՍԴՌ (շուրջ 27.6 մլն ԱՄՆ դոլար)*: Վարկային ծրագիրը նախատեսված է աղետի գոտու բնակիչների համար անհրաժեշտ բնակարանային և կենսական պայմանների ստեղծման, հիմնական ենթակառույցների վերականգնման, զբաղվածության ապահովման համար: Այս ծրագրի իրականացման շնորհիվ նախատեսվում էր՝ ա) 2000 ընտանիքների ապահովել բնակարաններով, բ) վերակառուցված գործարաններում շուրջ 2500 մարդու ապահովել աշխատատեղերով և գ) բարելավել ժամանակավոր կացարաններում բնակվող շուրջ 500000 բնակիչների բնակարանային պայմանները:

Այս ծրագրի շրջանակներում աղետի գոտու վերականգնման համար նախատեսվում էր մշակել տարածաշրջանի երկարաժամկետ զարգացման ռազմավարություն:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա օգոստոսի և փետրվարի 15-ին՝ 2003 - 2028 թթ. ընթացքում:

1999 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրի միջոցները ամբողջությամբ բաշխվել են:

Ոռոգման համակարգի վերականգնման վարկ

1994 թ. հոկտեմբերի 20-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, համաձայն որի Ընկերակցությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը տրամադրել է 29.4 մլն ՍԴՌ (շուրջ 40.3 մլն ԱՄՆ դոլար): Ծրագիրը կարևորվում է այնքանով, որ գյուղատնտեսական արտադրանքի շուրջ 75 տոկոսը ստացվում է ոռոգվող հողատարածություններից: Այն կազմված է 4 ենթածրագրերից՝

1) 12 ոռոգման համակարգերի և Արարատյան դաշտի ստորջրյա ցանցի վերականգնում (ընդգրկում է մոտ 164,700 հեկտար կամ Հայաստանի ոռոգելի հողատարածությունների 60 տոկոսը),
2) ջրի բաշխման բարելավման համակարգերի և ջրային ռեսուրսներ սպառողների ընկերակցությունների հիմնում,
3) ոռոգման ենթակառույցների սպասարկման և պահպանման ծախսերի ֆինանսավորում,
4) տեխնիկական օգնություն՝ ներառյալ ծրագրի իրագործման գրասենյակի հիմնում և կադրերի պատրաստում:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա մարտի և սեպտեմբերի 1-ին՝ 2005-29 թթ. ընթացքում:

1999 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրով բաշխվել է 30.3 մլն ԱՄՆ դոլար:

Էներգահամակարգի օժանդակության վարկ

1994 թ. դեկտեմբերի 23-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, համաձայն որի ՀՀ էներգետիկայի նախարարությանը տրամադրվել էր 9.4 մլն ՍԴՌ (12.9 մլն ԱՄՆ դոլար)՝ ՀՀ-ում էներգահամակարգի կատարելագործմանն աջակցելու նպատակով:

Նախագիծն ընդգրկում էր.

---

* *Հաշվարկները կատարված են 1999 թ. սեպտեմբերի 30-ի փոխարժեքով՝ 1.37 ԱՄՆ դոլար / ՍԴՌ:*

1) էլեկտրաէներգիայի արտադրության համակարգերի վերանորոգում, այդ թվում՝ Հրազդանի էլեկտրակայանի 200 Մվտ, Երևանի ՋԷԿ-ի 150 Մվտ հզորությամբ ջերմային բլոկների, Սևան - Հրազդան հիդրոհամալիրի 100 Մվտ և 44 Մվտ հզորությամբ, Որոտանի հիդրոհամալիրի 170 Մվտ հզորությամբ կայանների վերանորոգում,

2) էլեկտրաէներգիայի առաքման համակարգերի ամրացում և վերանորոգում,

3) տեխնիկական օգնություն:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա հունվարի և հուլիսի 15-ին՝ 2006-30 թթ. ընթացքում:

1999 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրի միջոցներն ամբողջությամբ բաշխվել են:

Վերականգնողական վարկ

1995 թ. մարտի 1-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, համաձայն որի Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 41.5 մլն ՍԴՌ (շուրջ 56.9 մլն ԱՄՆ դոլար)՝ տնտեսության վերականգնման նպատակով: Վարկային ծրագրով նախատեսվում է՝

1) աջակցել տնտեսության կայունացմանը, նրա հետագա զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարելավմանն ուղղված Կառավարության բարեփոխումների ծրագրին,

2) ապահովել արտարժութային միջոցներ՝ խիստ անհրաժեշտ ապրանքների (ծառայությունների) ներմուծման համար,

3) աջակցել բյուջեին՝ հատկապես առավել կարիքավոր խմբերի սոցիալական պաշտպանվածությունն ուժեղացնելու հարցում,

4) ստեղծել ֆինանսական օգնություն ստանալու հնարավորություն, խիստ անհրաժեշտության դեպքում միջոցներ ներգրավել նաև այլ դոնորներից:

Ծրագիրը նախատեսում է սեփականաշնորհման, ազատականացման և օրենսդրական բարեփոխումների միջոցով խթանել երկրում մրցունակ շուկաների զարգացումը, ամրապնդել ձեռնարկությունների և բանկերի ֆինանսական կարգապահությունը և կատարելագործել խիստ կարիքավորների սոցիալական պաշտպանվածության համար անհրաժեշտ համակարգերը:

Հիմնական գումարի մարումներն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա օգոստոսի և փետրվարի 15-ին՝ 2005-30 թթ. ընթացքում:

1999 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրի միջոցներն ամբողջությամբ բաշխվել են:

Մայրուղիների վերականգնման վարկ

1995 թ. մարտի 23-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, համաձայն որի Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 10.3 մլն ՍԴՌ (շուրջ 14.1 մլն ԱՄՆ դոլար): Վարկային ծրագրի նպատակներն են՝

1) ընդլայնել և վերանորոգել Հայաստանի ճանապարհացանցը և պահպանիչ գործառնությունների, ինչպես նաև կամուրջների և թունելների վերականգնման միջոցով կրճատել տրանսպորտի գործառնական ծախքերը,

2) տնտեսության այս ճյուղում զարգացնել շուկայական պահանջներին համապատասխան ինստիտուցիոնալ կառույցներ,

3) ընդլայնել ճանապարհների վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը՝ ճանապարհը շահագործողների կողմից վճարումներ կիրառելու միջոցով,

4) մասնակցել մասնավոր ճանապարհների կառուցմանը, ինչպես և ինժեներական կառույցների զարգացմանը,

5) բարելավել ճանապարհների պաշտպանվածությունը:

Վարկային ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրատարրերից՝ ա) մայրուղիների պարբերաբար վերանորոգում (շուրջ 1440 կմ միջպետական ճանապարհացանցի վերանորոգում), բ) կարևորագույն թունելների և կամուրջների վերանորոգում, գ) վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի ստացում, դ) ճանապարհների պահպանման գործառնությունների որակը բարելավող սարքավորումների ստացման աջակցում, ե) կառավարման հարցերին առնչվող խորհրդատվական ծառայությունների մատուցում ու կադրերի վերապատրաստման ծրագրերին աջակցում, զ) նախագծային գործունեության կառավարման և կոորդինացման նպատակով ծրագրի իրագործման գրասենյակի հիմնում:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա մարտի և սեպտեմբերի 1-ին՝ 2005-30 թթ. ընթացքում:

1997 թ. հունիսի 25-ին Հայաստանի ճանապարհացանցի վերանորոգման ծրագրի լրացուցիչ աշխատանքների ֆինանսավորման նպատակով տրամադրվել է 11 մլն ՍԴՌ (շուրջ 15.1 մլն ԱՄՆ

դոլար): Դրա հաշվին կֆինանսավորվեն միջպետական ճանապարհացանցի վերանորոգման աշխատանքները, Վրաստանի հետ կարևորագույն ճանապարհային կապի վրա թունելի վերակառուցումը, կգնվեն շինարարական նյութեր, սարքավորումներ և կիրականացվեն ծրագրի վարչական ծախքերը:

1999 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից (ներառյալ լրացուցիչ ֆինանսավորումը) բաշխվել է 24.45 մլն ԱՄՆ դոլար:

Սոցիալական ներդրումների հիմնադրամի վարկ

1995 թ. օգոստոսի 24-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, համաձայն որի Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 8.1 մլն ՍԴՌ (շուրջ 11.1 մլն ԱՄՆ դոլար)՝ Սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագրի ֆինանսավորման համար: Ծրագիրը կազմված է հետևյալ 4 ենթածրագրերից՝

1) ենթակառույցների, մասնավորապես քաղաքային և գյուղական ճանապարհների, ոռոգման համակարգերի, դպրոցների և բժշկական կենտրոնների վերականգնմանն ուղղված միկրոնախագծերի ֆինանսավորում,

2) փոքր ձեռնարկությունների զարգացմանը, մասնավորապես նոր աշխատատեղերի ստեղծմանը օժանդակում,

3) ծրագրերի իրագործման գրասենյակների հիմնում, համայնքներին և մասնավոր ֆիրմաներին տեխնիկական աջակցության ապահովում,

4) բնակչության կենսապայմանների մոնիտորինգի նպատակով տեխնիկական օգնության ապահովում և ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարությանը աջակցում:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա մարտի և սեպտեմբերի 1-ին՝ 2006-30 թթ. ընթացքում:

1999 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է 10.3 մլն ԱՄՆ դոլար:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ I

1996 թ. մարտի 4-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, համաձայն որի Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 40.1 մլն ՍԴՌ (շուրջ 54.9 մլն ԱՄՆ դոլար) Կառուցվածքային բարեփոխումների վարկ: Վարկային ծրագրի նպատակը համընկնում է 1995 թ. մարտի 1-ի պայմանագրով ՀՀ տնտեսության վերականգնման համար տրամադրված վարկային ծրագրի նպատակներին՝

1) աջակցել տնտեսության կայունացմանը, հետագա զարգացմանը, ինչպես և բնակչության կենսամակարդակի բարելավմանն ուղղված Կառավարության բարեփոխումների ծրագրին,

2) ապահովել արտարժութային միջոցներ՝ խիստ անհրաժեշտ ապրանքների (ծառայությունների) ներմուծման համար,

3) աջակցել բյուջեին՝ հատկապես առավել կարիքավոր խմբերի սոցիալական պաշտպանվածությունն ուժեղացնելու հարցում,

4) ստեղծել ֆինանսական օգնություն ստանալու հնարավորություն, խիստ անհրաժեշտության դեպքում միջոցներ ներգրավել նաև այլ դոնորներից:

Ծրագիրն իրականացնում է հետևյալ քաղաքականությունները՝ տնտեսության ուղղակի կառավարման մեջ պետության դերի կրճատում և վերակողմնորոշում դեպի մասնավոր հատվածի զարգացմանն աջակցելուն, ձեռնարկությունների ու բանկերի ֆինանսական կարգապահության ամրապնդում և խիստ կարիքավորների սոցիալական պաշտպանվածության համար անհրաժեշտ համակարգերի բարելավում:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա մարտի և սեպտեմբերի 15-ին՝ 2005-30 թթ. ընթացքում:

1999 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրի միջոցներն ամբողջությամբ բաշխվել են:

Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկ I

1996 թ. մարտի 4-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, համաձայն որի ՀՀ կառավարությանը տրամադրվել է 2.6 մլն ՍԴՌ (շուրջ 3.6 մլն ԱՄՆ դոլար)՝ կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնությունն իրականացնելու նպատակով: Վարկային ծրագրի առաջնային նպատակն էր՝ աջակցել տնտեսության կայունացմանը և հետագա զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարելավման

պայմանների ստեղծմանն ուղղված Կառավարության բարեփոխումների ծրագրին: Այն ուղղված էր Կառավարության բարեփոխումների ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական օգնության ֆինանսավորմանը: Նախատեսվում էր տեխնիկական մասնակցությամբ աջակցել սեփականաշնորհման գործընթացին, ֆինանսական հատվածի ամրապնդմանը, պետական ծառայությունների բարեփոխմանն ու ռեսուրսների հավաքագրմանը:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա մարտի և սեպտեմբերի 15-ին՝ 2005-30 թթ. ընթացքում:

1999 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է 2.4 մլն ԱՄՆ դոլար:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ II

1997 թ. սեպտեմբերի 2-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, համաձայն որի ՀՀ կառավարությանը տրամադրվել է 43.1 մլն ՍԴՌ (շուրջ 59 մլն ԱՄՆ դոլար)՝ մակրոտնտեսական կայունության ապահովմանն ու մասնավոր հատվածի հետագա զարգացմանն ուղղված Կառավարության ծրագրին աջակցելու նպատակով: Վարկային ծրագրով նախատեսվում էր՝

1) բարելավել ֆինանսական կարգապահությունը մասնավոր և պետական հատվածներում,

2) արագացնել մասնավոր հատվածի զարգացումը,

3) ամրապնդել սոցիալական ապահովվածության ցանցը և ապահովել տարրական առողջապահական ու կրթական ծառայությունների մատուցումը:

Մասնավոր և պետական հատվածներում ֆինանսական կարգապահության բարելավմանն ուղղված միջոցառումները պետք է իրականացվեն 3 ոլորտներում՝ ա) հարկերի հավաքագրման ավելացման և հարկային ապառքների կրճատման, բ) էներգետիկ հատվածի բարեփոխումներն ապահովող օրենսդրական դաշտի ստեղծման և այդ հատվածի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի բարելավման, գ) ոռոգման և մաքուր ջրի անխափան մատակարարման համակարգի ֆինանսական վերակառուցման և ինստիտուցիոնալ ու օրենսդրական բարեփոխումների միջոցով:

Մասնավոր հատվածի զարգացումը պետք է արագացվի ձեռնարկությունների սեփականաշնորհման ծրագիրն ավարտելու, բանկային հատվածն ուժեղացնելու և կապիտալ շուկաները զարգացնելու միջոցով: Աղքատության մակարդակը կրճատելու նպատակով սոցիալական նպաստները պետք է ուղղվեն առավել անապահով տարրերին, իսկ նպաստների իրական մակարդակը պետք է մեծացվի: Ծրագիրը ներառում է նաև պետական կենսաթոշակային համակարգի բարեփոխման ու մասնավոր կենսաթոշակային սխեմաների կիրառության մեջ դնելու միջոցառումներ:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա հունվարի և հուլիսի 1-ին՝ 2008-32 թթ. ընթացքում:

1999 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրի միջոցներն ամբողջությամբ բաշխվել են:

Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկ II

1997 թ. օգոստոսի 26-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, համաձայն որի ՀՀ կառավարությանը տրամադրվել է 3.6 մլն ՍԴՌ (շուրջ 4.9 մլն ԱՄՆ դոլար)՝ կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնությունն իրականացնելու նպատակով: Տեխնիկական օգնության այս վարկային ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրատարրերը՝

1) ռեսուրսների հավաքագրում, այսինքն՝ պետական հարկային տեսչության և մաքսային վարչության կոմպյուտերացման ավարտում,

2) էներգետիկ հատվածի բարեփոխումներ, այն է՝ էներգետիկայի նախարարության դերի ու գործառույթների վերանայում և էներգիայի բաշխման և արտադրական ձեռնարկությունների սեփականաշնորհման արագացում,

3) հանրային տեղեկատվության և դատական ոլորտի բարեփոխումներ, այն է՝ արդի տնտեսական ռեֆորմներին ուղղված հանրային տեղեկատվության ռազմավարության զարգացում և աջակցություն դատական ոլորտի բարեփոխումների նախապատրաստմանը,

4) կապիտալ շուկաների զարգացում, այն է՝ կապիտալ շուկաների զարգացման ռազմավարության մշակում:

Նախագծով նախատեսվում է նաև տեխնիկապես աջակցել սեփականաշնորհմանը, ֆինանսական հատվածի, սոցիալական պաշպանվածության, առողջապահության և կրթության ոլորտների բարեփոխումներին:

Հիմնական գումարի մարումներն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա հունվարի և հուլիսի 1-ին՝ 2008-2032 թթ. ընթացքում:

1999 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է 1.43 մլն ԱՄՆ դոլար:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ III

1998 թ. դեկտեմբերի 23-ին կնքվել է վարկային պայմանագիր Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև, որի համաձայն ՀՀ կառավարությանը տրամադրվել է 46.2 մլն ՍԴՌ (շուրջ 63.3 մլն ԱՄՆ դոլար): Ծրագրի նպատակն է՝ օժանդակել մակրոտնտեսական կայունության ամրապնդման և մասնավոր հատվածի միջնաժամկետ աճի Կառավարության ծրագրերին:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրատարրերից՝

1) մասնավոր և պետական հատվածներում ֆինանսական կարգապահության ամրապնդում,

2) մասնավոր հատվածի զարգացման արագացում,

3) բարեփոխումների սոցիալական կայունության ապահովում:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, ամեն տարվա հունիսի և դեկտեմբերի 15-ին՝ 2008-2032 թթ. ընթացքում:

1999 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է 38.16 մլն ԱՄՆ դոլար:

Ձեռնարկությունների զարգացման վարկ

1996 թ. դեկտեմբերի 27-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, որով ՀՀ կառավարությանը տրամադրվել է 11.6 մլն ՍԴՌ (շուրջ 15.9 մլն ԱՄՆ դոլար): Վարկային ծրագրի նպատակն է՝ մասնավոր ձեռնարկություններում և բանկերում ֆինանսական ներդրումների ապահովման, արտահանման կողմնորոշում ունեցող համատեղ ձեռնարկությունների ստեղծման, ձեռնարկությունների կառավարման բարելավմանն աջակցման և բանկային ու կապիտալի շուկայի հաստատությունների զարգացման միջոցով ամրապնդել հայկական մասնավոր ձեռնարկություններն ու բանկերը: Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրատարրերից՝

1) ֆինանսական ներդրումների ապահովում, որն իրականացվելու է հետևյալ կերպ. տեղական բանկերի միջոցով ֆինանսավորվելու են թեթև արդյունաբերության, ագրոբիզնեսի, առևտրական ծառայությունների, առևտրի, շինարարության, հանքահանության մեջ զբաղված ձեռնարկություններում իրականացվող հատուկ տնտեսական զարգացման ծրագրերը.

2) բանկերում և կապիտալի շուկայում ինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնելու համար առևտրային բանկերին և ձեռնարկություններին մատուցվելու են խորհրդատվական ծայառություններ, տրամադրվելու են սարքավորումներ և կազմակերպվելու են վերապատրաստման դասընթացներ: Այս ծրագրի շրջանակներում դրամաշնորհներ են տրամադրվելու արտահանման կողմնորոշում ունեցող ձեռնարկություններին:

Վարկը տրամադրվում է 35 տարի ժամկետով՝ ներառյալ 10 տարի արտոնյալ ժամկետը:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա հունվարի և հուլիսի 15-ին՝ 2007- 2031 թթ. ընթացքում:

1999 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է 9.64 մլն ԱՄՆ դոլար:

Համայնքային զարգացման վարկ

1998 թվականի հունիսի 19-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, որով ՀՀ կառավարությանը տրամադրվել է 22.3 մլն ՍԴՌ (շուրջ 30.6 մլն ԱՄՆ դոլար)՝ համայնքային զարգացման ծրագրի ֆինանսավորման նպատակով: Վարկային ծրագրի նպատակն է՝

1) բարելավել Երևանի ջրամատակարարման համակարգը,

2) կատարելագործել Երևանի ջրմուղ-կոյուղու ծառայությունների արդյունավետությունը, կառավարումը, աշխատանքները և մատակարարումը,

3) ՀՀ տարածքում ստեղծել ջրմուղ-կոյուղու ծառայությունների ընդհանուր կառավարման մեջ մասնավոր հատվածի կայուն ներգրավման հիմնական համակարգ,

4) զարգացնել պետական բնակարանային շինարարության քաղաքականությունը՝ կենտրոնանալով բնակարանային շինարարության բնագավառի ընթացիկ բարեփոխումների հետ կապված ճգնաժամային տնտեսական հարցերի վրա,

5) երկրաշարժից վնասված գոտու համար մշակել բնակարանային շինարարության ռազմավարություն:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա հունիսի և դեկտեմբերի 15-ին՝ 2008-2032 թթ. ընթացքում:

1999 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է 2.9 մլն ԱՄՆ դոլար:

Առողջապահության ֆինանսավորման և առաջնային բուժօգնության զարգացման ծրագիր

1997 թ. սեպտեմբերի 2-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, որով ՀՀ կառավարությանը տրամադրվել 7.2 մլն ՍԴՌ (շուրջ 9.9 մլն ԱՄՆ դոլար)՝ առողջապահության ոլորտի և առաջնային բուժօգնության զարգացման ծրագրի ֆինանսավորման նպատակով: Ծրագիրը կնպաստի առաջնային բուժօգնության որակի և առողջապահության ոլորտում պետական ծախսերի արդյունավետության բարձրացմանը: Ծրագրի հիմնական նպատակներն են՝

1) որոշել տեղական բուժօգնության առաջնահերթ ոլորտները և ակտիվացնել բազային բուժօգնության մեջ ծառայությունների կայացման գործում համայնքների դերը,

2) բարելավել առաջնային բուժօգնության անձնակազմի հմտությունները, բուժօգնության ուղղությունները, բուժօգնության որոշակի ոլորտներում սարքավորումները,

3) բարձրացնել առողջապահության ոլորտում պետական ծախսերի արդյունավետությունը, կատարելագործել ծրագրավորումը և ֆինանսական կառավարումը:

Վարկը տրամադրվում է 35 տարի ժամկետով՝ ներառյալ 10 տարի արտոնյալ ժամկետը:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա հունվարի և հուլիսի 1-ին, 2008-2032 թթ. ընթացքում:

1999 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է է 0.97 մլն ԱՄՆ դոլար:

Կրթության ֆինանսավորման և կառավարման բարեփոխման ծրագիր

1998 թ. փետրվարի 4-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, որով ՀՀ կառավարությանն է տրամադրվել 11.1 մլն ՍԴՌ (շուրջ 15.2 մլն ԱՄՆ դոլար)՝ կրթության համակարգի և կառավարման բարեփոխումների ծրագրի ֆինանսավորման նպատակով: Ծրագրի խնդիրները հետևյալն են՝

1) աջակցել կրթական հաստատության այնպիսի կառուցվածքի (կենտրոնական, տեղային և դպրոցների մակարդակներով) ստեղծմանը, որը կնպաստի հիմնական կրթական համակարգի արդյունավետ կառավարմանը,

2) աջակցել դպրոցների առաջադիմությանն ուղղված բարեփոխումներին՝ խթանելով դպրոցի կողմից առաջարկված նախաձեռնությունները և բարելավելով դասագրքերի ու դասավանդման նյութերի մատակարարումը:

Վարկը տրամադրվում է 35 տարի ժամկետով՝ ներառյալ 10 տարի արտոնյալ ժամկետը:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա հունիսի և դեկտեմբերի 15-ին՝ 2007-2032 թթ. ընթացքում:

1999 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է 4.28 մլն ԱՄՆ դոլար:

Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագիր

1998 թ. հունվարի 27-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր, որով ՀՀ կառավարությանն է տրամադրվել է 10.7 մլն ՍԴՌ (շուրջ 14.7 մլն ԱՄՆ դոլար)՝ գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման նպատակով: Ծրագիրն ունի հետևյալ բաղադրատարրերը՝

1) գյուղատնտեսական արտադրական ձեռնարկություններում միջինժամկետ ներդրումների համար բիզնես-պլանների կազմման նպատակով խորհրդատվական ծառայությունների մատուցում,

2) գյուղատնտեսական վարկերի տրամադրման ցանցի կատարելագործում,

3) գյուղատնտեսության վիճակի վերլուծություն և ընդլայնում:

Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա հունիսի և դեկտեմբերի 15-ին՝ 2008-32 թթ. ժամանակահատվածում:

1999 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է 4.95 մլն ԱՄՆ դոլար:

Սեփականության իրավունքի գրանցման ծրագիր

1998 թ. հոկտեմբերի 13-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր՝ 8.0 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ: Ծրագրից կօգտվեն գյուղատնտեսությամբ զբաղվող մասնավոր անձինք, փոքր և միջին ձեռնարկությունները և քաղաքային սեփականություն ունեցողները, քանի որ այս ծրագրի նպատակն է՝ ստեղծել հողի և այլ սեփականության գրանցման առավել հուսալի համակարգ, որը ներառում է նաև սեփականատերերի և նրանց իրավունքների ու պարտականությունների ժամանակագրական գրանցումը*:

Վարկը տրամադրվում է 35 տարի ժամկետով՝ ներառյալ 10 տարի արտոնյալ ժամկետը, այսինքն, հիմնական գումարի մարումները և վարկի սպասարկման վճարները նախատեսվում է իրականացնել 2009-33 թվականներին:

1999 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է 0.5 մլն ԱՄՆ դոլար:

Էլեկտրականության փոխանցման և բաշխման ծրագիր

1999 թ. մարտի 4-ին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է վարկային պայմանագիր՝ 21 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ: Վարկը տրամադրվել է էներգետիկ համակարգի վերակառուցման և զարգացման ծրագրի I փուլին աջակցելու նպատակով: Վարկային միջոցներով նախատեսվում է վերականգնել Հայաստանի էլեկտրափոխանցման և բաշխման ցանցը, կրճատել դրանցում կորուստներն ու ծառայության ծախքերը, ապապետականացնել ձեռնարկությունները և ներգրավել մասնավոր ներդրումներ*:

Վարկը տրամադրվում է 35 տարի ժամկետով՝ ներառյալ 10 տարի արտոնյալ ժամկետը, այսինքն, հիմնական գումարի մարումները նախատեսվում է իրականացնել 2009-33 թվականներին:

1999 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է 0.44 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ շրջակա միջավայրի պահպանության դրամաշնորհ

1995 թ. ապրիլին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է դրամաշնորհի պայմանագիր, համաձայն որի ՀՀ կառավարությանը տրամադրվել է 200,000 ԱՄՆ դոլար՝ շրջակա միջավայրի պահպանության ծրագրի համար:

Դրամաշնորհի առաջնային նպատակն է՝ օգնել Հայաստանին զարգացնելու իր ինստիտուցիոնալ կարողությունները՝ համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծման և երկրում շրջակա միջավայրի հիմնախնդիրների կառավարման միջոցով: Դրամաշնորհի միջոցով ապահովվում է տեխնիկական օգնություն Հայաստանի իշխանություններին, որը հնարավորություն կտա.

1) գնահատել շրջակա միջավայրի ազդեցությունը բնակչության առողջական մակարդակի վրա, որոշել այդ ոլորտում իրականացվող ծախսերի արդյունավետությունը և արդյունքում առանձնացնել հիմնախնդիրները,

2) հաշվի առնել շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացվող քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կառավարման փորձը,

3) ցուցաբերել պատշաճ տնտեսական մոտեցում շրջակա միջավայրի հիմնախնդիրների նկատմամբ,

4) ապահովել հանրության ակտիվ մասնակցությունը շրջակա միջավայրի պահպանության ռազմավարության մշակման գործում:

Սևանա լճի վերականգնման դրամաշնորհ

1995 թվականի սեպտեմբերին Ընկերակցության և ՀՀ կառավարության միջև կնքվել է դրամաշնորհի պայմանագիր, համաձայն որի Ընկերակցությունը ՀՀ-ին տրամադրել է 485,000 ԱՄՆ դոլար՝ Սևանա լճի վերականգնման ծրագրի նախապատրաստման համար:

Դրամաշնորհը տրամադրվել է գործունեության հետևյալ ուղղությունների համար.

1) աջակցել Սևանա լճի հիմնախնդիրների (լճի ջրի աղտոտման պատճառների, ջրային ռեսուրսների թույլատրելի սահմաններում օգտագործման և ձկնային ռեսուրսների կառավարման) քննարկման աշխատանքների կազմակերպմանը տարբեր ինստիտուցիոնալ մակարդակներում,

2) նախապատրաստել Սևանա լճի վերականգնման ծրագիր՝ հստակեցնելով կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումները և այդ նպատակով անհրաժեշտ ներդրումների ծավալները,

3) հետազոտել Սևանա լճի վերականգնման ծրագրի ֆինանսավորման հնարավորությունները՝ չբացառելով տրաստային հիմնադրամի կազմակերպումը:

Միջազգային ֆինանսական կորպորացիա
(IFC)

Ստեղծումը, գործունեության նպատակները և խնդիրները

Միջազգային ֆինանսական կորպորացիան (այսուհետ՝ Կորպորացիա) հիմնվել է 1956 թվականին՝ նպատակ ունենալով նպաստել ու զարգացնել մասնավոր հատվածի գործունեությունը զարգացող երկրներում: Կորպորացիայի ստեղծման գործում կարևոր նշանակություն է ունեցել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1954 թվականին ընդունած որոշումը՝ զարգացող երկրներում մասնավոր ներդրումների խթանման մասին:

1999 թ. հունիսի 30-ի դրությամբ Կորպորացիայի կազմի մեջ մտնում էր 174 երկիր: Կորպորացիային անդամակցելու համար երկրները պետք է լինեն ՎՋՄԲ անդամ:

Կազմակերպական կառուցվածքը

Կորպորացիայի ընդհանուր ղեկավարումը վստահված է Կառավարիչների Խորհրդին, որտեղ անդամ-երկրները նշանակում են ներկայացուցիչներ: Կառավարիչների Խորհուրդն իր իրավասությունների մի մասը լիազորում է Տնօրենների Խորհրդին, որի կազմում ընդգրկված են անդամ-երկրները ներկայացնող ՎՋՄԲ գործադիր Տնօրենները: Բոլոր ծրագրերը վերանայվում են Տնօրենների խորհրդի կողմից: Այսպիսով, Կորպորացիայի ղեկավար մարմինները ՎՋՄԲ ղեկավար մարմիններն են, և որոշումների ընդունման գործընթացն ու անդամների միջև ձայների բաշխման սկզբունքը համանման է ՎՋՄԲ-ում ձևավորված սկզբունքին: Միակ տարբերությունն այն է, որ Կորպորացիայում յուրաքանչյուր 1000 ԱՄՆ դոլար անվանական արժեք ունեցող լրացուցիչ բաժնետոմսի դիմաց տրվում է 1 լրացուցիչ ձայն:

Ռեսուրսների ձևավորումը

Կորպորացիայի ռեսուրսները կազմավորվում են նրա անդամ երկրների մուծումներից, միջազգային կապիտալի շուկաներից ներգրաված փոխառություններից (մոտ 80%) և ՎՋՄԲ կողմից Կորպորացիային տրամադրվող փոխատվություններից: Համաձայն ՎՋՄԲ-ի 1965 թվականի փոփոխված կանոնադրության, Կորպորացիան իրավունք ունի օգտվել վերջինիս վարկերից՝ իր կանոնադրական կապիտալի քառապատիկ չափով: Միջազգային կապիտալի շուկաներից ֆինանսական միջոցները փոխառվում են մուրհակների, պարտատոմսերի և այլ պարտքային արժեթղթերի թողարկման կամ նրանց մասնավոր տեղաբաշխման միջոցով:

Կորպորացիայի հայտարարած կանոնադրական կապիտալը բաղկացած է 2,450,000 բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 1,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով: 1999 թվականի հունիսի 30-ի դրությամբ բաժանորդագրված էր 2,374,000 բաժնետոմս: Անդամ-երկրները կարող են իրենց բաժնեմասը վճարել ամբողջությամբ կամ մաս-մաս (տարվա ընթացքում հավասար մասնաբաժիններով): Մինչև բաժնեմասի փաստացի վճարումը՝ Կորպորացիան գրանցում է տվյալ երկրի կողմից բաժանորդագրված արժեթղթերի համապատասխան քանակը և անդամ-երկրների քվեների թիվը:

Վարկային քաղաքականությունը, ակտիվ գործառնությունների բնութագիրը

Կորպորացիան լրացնում է ՎՋՄԲ-ի գործունեությունը հետևյալ երեք ուղղություններով.

- մասնավոր հատվածի ծրագրերի ֆինանսավորում,
- օժանդակություն զարգացող երկրների ձեռնարկություններին՝ միջազգային ֆինանսական շուկաներից ֆինանսավորում ստանալու հարցում,
- խորհրդատվության և տեխնիկական օժանդակության տրամադրում ձեռնարկություններին և կառավարություններին:

Մասնավոր հատվածի ծրագրերի ֆինանսավորումը

Կորպորացիան անդամ հանդիսացող զարգացող երկրների ձեռնարկություններին առաջարկում է ֆինանսական միջոցների և ծառայությունների մի ամբողջ շարք.

- երկարաժամկետ վարկեր փոխարկելի արժույթով, կայուն կամ փոփոխվող տոկոսադրույքներով,
- բաժնետիրական ներդրումներ,

---

* *«Համաշխարհային բանկի տարեկան հաշվետվություն» (անգլ.), 1999 թ., էջ 162:*

- կվազի բաժնետիրական ներդրումներ (սուբորդինացված վարկեր, արտոնյալ բաժնետոմսեր, եկամտի համաձայնագրեր),
- երաշխիքներ և ռեզերվային ֆինանսավորում,
- ռիսկի կառավարում (միջնորդություն արտարժութային և տոկոսադրույքային սվոպ գործարքներում, հեջինգային մեխանիզմների ապահովում):

Ծրագրերի ֆինանսավորումն ապահովելու նպատակով Կորպորացիան ծառայություններ է մատուցում ինչպես առանձին, այնպես էլ համատեղ ֆինանսավորման ձևով: Կողորդինացնելով արտասահմանյան և տեղական բանկերից, ընկերություններից, վարկային գործակալություններից ստացված ֆինանսավորումը՝ Կորպորացիան աջակցում է նաև ընկերությունների ֆինանսական փաթեթների ձևավորմանը:

Կորպորացիան ֆինանսավորում է տնտեսության ամենատարբեր ոլորտներին առնչվող ծրագրեր՝ գյուղատնտեսությունից մինչև լեռնահանքային արդյունաբերություն, արդյունաբերությունից՝ զբոսաշրջիկություն: Այն առաջին հերթին համարվում է մասնավոր հատվածի ֆինանսավորող, սակայն կարող է ֆինանսավորել նաև պետական մասնակցությամբ ձեռնարկություններին, եթե նրա բաժնետիրական կապիտալում առկա է մասնավոր հատվածի մասնակցությունը և այդ ձեռնարկությունն աշխատում է առևտրային հիմունքներով: Կորպորացիան ֆինանսավորում է ինչպես տեղական ձեռնարկություններին, այնպես էլ օտարերկրյա մասնակցությամբ համատեղ ձեռնարկություններին: Նրա վարկային գործառնությունների ծավալը կարող է համեմատվել ՎԶՄԲ-ի կամ, նույնիսկ, Ընկերակցության վարկերի ծավալների հետ: 1999 թվականի հունիսի 30-ի դրությամբ Կորպորացիան իրականացրել էր ներդրումներ և տրամադրել վարկեր շուրջ 21.2 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով: 1999 ֆինանսական տարում ներդրումներ է իրականացրել 79 երկրում՝ 3.6 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ:

Կորպորացիան հիմնականում ֆինանսավորում է միջին չափի, բայց բարձր եկամտաբերություն ունեցող ձեռնարկություններին, քանի որ նրա փոխառությունների տոկոսադրույքը շուկայական է (թեև փոխառությունների ժամկետը երկարատև է՝ մինչև 15 տարի, մինչև 4 տարի արտոնյալ ժամկետով): Կորպորացիայի ֆինանսավորումը յուրաքանչյուր ծրագրի համար սահմանափակվում է նրա ընդհանուր արժեքի 25 տոկոսի չափով՝ ապահովելու մասնավոր հատվածի ներդրողների և վարկատուների մասնակցությունը, սակայն մեկ ձեռնարկությանը տրամադրվող միանգամյա փոխառության չափը չի կարող գերազանցել 4 մլն դոլարը: Այսպիսով, նույնիսկ մասնավոր ներդրումների դեպքում Կորպորացիայի գործունեությունը կրում է լրացնող բնույթ:

Կորպորացիայի առանձնահատկությունն այն է, որ նա, բացի վարկեր տրամադրելուց, ուղղակի ներդրումներ է կատարում կառուցվող և ընդլայնվող ձեռնարկությունների բաժնետիրական կապիտալներում՝ այդ արժեթղթերը հետագայում մասնավոր ներդրողներին վերավաճառելու պայմանով: Մասնավոր ընկերություններին փոխառություններ տրամադրելով կամ ֆինանսական միջոցներն ուղղակիորեն ներդնելով ձեռնարկությունների կապիտալներում՝ Կորպորացիան, ի տարբերություն ՎԶՄԲ-ի և Ընկերակցության, կառավարական երաշխիքներ չի պահանջում, ինչը մասնավոր ընկերությունների գործունեությունը զերծ է պահում կառավարական վերահսկողությունից:

Կորպորացիայի ուղղակի ներդրումները մասնավոր ընկերությունների բաժնետիրական կապիտալում սովորաբար չեն գերազանցում այդ ընկերության բաժնետիրական կապիտալի 1/5 մասը: Կորպորացիան կարող է մինչև 35 տոկոս բաժնետիրական կապիտալ ներդնել միայն այն դեպքում, եթե ծրագրի ամենախոշոր բաժնետերը չէ: Կորպորացիայի ներդրումները տատանվում են 1 մլն դոլարից մինչև 100 մլն դոլարի սահմաններում: Նրա տրամադրած միջոցները կարող են օգտագործվել հաստատուն շրջանառու կապիտալի կամ ՎԶՄԲ-ի ցանկացած անդամ-երկրում հիմնական միջոցներ ձեռք բերելու նպատակով:

Օժանդակություն զարգացող երկրների ձեռնարկություններին միջազգային ֆինանսական շուկաներից ֆինանսավորում ստանալու հարցում

Կորպորացիայի մասնակցությունը ծրագրերում մասնավոր ներդրումների արագացնող գործոն է, քանի որ մեծացնում է ներդրողի վստահությունը և ներգրավում այլ վարկառուների ու բաժնետերերի: Կորպորացիան առևտրային բանկերից և այլ ֆինանսավարկային հաստատություններից վարկային մասնակցության միջոցով հավաքագրում է միջոցներ, որոնք հետագայում վաճառում է:

Կորպորացիան իր միջոցները ներդնում է Գանձապետական պարտատոմսերում և ժամկետային դեպոզիտներում՝ միաժամանակ խթանիչ դեր կատարելով համատեղ ֆինանսավորման, սինդիկացված վարկերի*, անդերրայտինգի** և երաշխիքների տրամադրման միջոցով մյուս ներդրողների և վարկատուների կողմից լրացուցիչ ֆինանսական միջոցներ հավաքագրելու գործում:

---

* *Փոխառության տրամադրում մի խումբ բանկերի կողմից:*

** *Երբ ստանձնում են արժեթղթերի թողարկման ռիսկը՝ նրանց տարածումը երաշխավորելու ճանապարհով:*

Խորհրդատվության և տեխնիկական օժանդակության տրամադրում ձեռնարկություններին

և կառավարություններին

Նպատակ ունենալով զարգացող երկրների մասնավոր հատվածում մեծացնել ձեռներեցության հնարավորությունները՝ Կորպորացիան մատուցում է մի շարք ֆինանսական և տեխնիկական խորհրդատվական ծառայություններ զարգացող երկրների կառավարություններին՝ մասնավոր ձեռնարկությունների և օտարերկրյա ներդրումների աճի համար բարենպաստ միջավայր ստեղծելու վերաբերյալ: Այն օգնում է կառավարություններին՝ զարգացնել կապիտալի ներքին շուկաները, վերակառուցել ու սեփականաշնորհել պետական ձեռնարկությունները: Արտաքին ներդրումների խորհրդատվական ծառայությունը, որը Կորպորացիայի և ՎՋՄԲ-ի համատեղ ծառայություն է, խորհրդատվություն է տրամադրում օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու հարցում:

Բացի տարբեր ծրագրեր ֆինանսավորելուց՝ Կորպորացիան վարում է լայն հետազոտական աշխատանք, որի արդյունքները հաճախ տրամադրում է մասնավոր ներդրողներին: Նա զբաղվում է նաև օրենսդրական նորմատիվ ակտերի մշակմամբ և լրամշակմամբ:

ՎՋՄԲ-ն Կորպորացիային մատուցում է վարչական ծառայություններ, որոնցից են կապը, ներքին աուդիտորական ծառայությունը, վարչական աջակցությունը, գրասենյակի պահպանման ծախսերը և ապահովագրությունը: Այս ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են կողմերի փոխհամաձայնությամբ:

Հայաստանի Հանրապետության և Միջազգային ֆինանսական կորպորացիայի փոխհարաբերությունները

1999 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի բաժնեմասը Կորպորացիայի կապիտալում կազմում էր 992 բաժնետոմս՝ 992,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Հայաստանի քվեների թիվը կազմում էր 1242 ձայն, որն ընդհանուր քվեների թվի 0.05 %-ն է:

Կորպորացիայի հայաստանյան գրասենյակը սկսել է իր գործունեությունը 1999 թվականի սկզբին: Ներկայումս ավարտման փուլում է Հայաստանում Կորպորացիայի առաջին ծրագիրը՝ «Արմենիա» հյուրանոցային համալիրի ֆինանսավորումը մի խումբ սփյուռքահայ ներդրողների և «Մերիոտ-Ինտերնեյշնլ» միջազգային կորպորացիայի համագործակցությամբ: Կորպորացիայի ֆինանսավորման համար նախնական փուլում են գտնվում նաև մի շարք այլ ծրագրեր գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, ենթակառուցվածքների և ֆինանսական ոլորտներից: Հայաստանում Կորպորացիայի առաջին տեխնիկական օժանդակության ծրագրի՝ «Կորպորատիվ կառավարման» շրջանակներում արդեն կազմակերպվել են 3 ուսուցողական սեմինարներ՝ ավելի քան 60 տեղական ձեռնարկությունների համար:

Կորպորացիան նախատեսում է 2000 թ. ընթացքում Լոս-Անջելեսում կամ Փարիզում կազմակերպել «Սփյուռք-Ներդրող» համաժողով, որը նպատակ ունի խթանել օտարերկրյա ներդրումները Հայաստանում:

Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն *(ICSID)*

Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) ստեղծվել է 1966 թվականին: Կենտրոնի նպատակն է՝ աջակցել միջազգային ներդրումների հոսքերին, որն իրականացվում է կառավարությունների և օտարերկրյա ներդրողների միջև վեճերի քննարկման և հարթման միջոցով վճարումների անհրաժեշտ մեխանիզմների ապահովման ձևով: Այդ մեխանիզմների հիմքում ընկած են միջազգային ներդրումային պայմանագրեր, ներդրումների մասին օրենքներ, երկկողմանի և բազմակողմանի ներդրումային համաձայնագրեր:

Կենտրոնն իրականացնում է նաև խորհրդատվական ծառայություններ, կատարում հետազոտական-վերլուծական աշխատանքներ և օտարերկրյա ներդրումների մասին օրենքների շրջանակներում հրատարակում է նյութեր: Օտարերկրյա ներդրումների ոլորտին առնչվող Կենտրոնի նյութերը հրապարակվում են ներդրումային օրենքների և որոշումների բազմահատոր ժողովածուում և կիսամյակային օրենսդրական ամսագրերում:

1999 թ. հունիսի 30-ի դրությամբ Կենտրոնին անդամակցում էր ՎՋՄԲ անդամ 131 երկիր:

Հիմնադրման օրից Կենտրոնը քննարկել է 65 վեճեր, այդ թվում՝ 1999 ֆինանսական տարում՝ 11 վեճ:

Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալություն *(MIGA)*

Ստեղծումը, գործունեության նպատակները և խնդիրները

Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն) հիմնվել է 1988 թվականի ապրիլի 12-ին: Գործակալության նպատակն է՝ օգնել զարգացող երկրներին՝ ներգրավելու արտադրողական ներուժի ստեղծմանը նպաստող օտարերկրյա ներդրումներ ինչպես մասնավոր ներդրողներից, այնպես էլ ձեռներեցությամբ զբաղվող պետական ընկերություններից: Նրա գործունեությունը ներառում է.

- երաշխիքների տրամադրում կամ ոչ առևտրային ռիսկերի ապահովագրում,
- անդամ-երկրներում օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ միջավայրի ստեղծմանն օժանդակող խորհրդատվական ու խորհրդակցական ծառայությունների մատուցման ծրագրերի իրագործում:

1999 թվականի հունիսի 30-ի դրությամբ Գործակալության կազմի մեջ մտնում էր 149 երկիր: Գործակալությանն անդամակցելու համար երկրները պետք է լինեն ՎԶՄԲ անդամ:

Գործակալությունն ունի իր առանձին գործառնական և իրավական անձնակազմը և օրենսդրորեն ու ֆինանսապես անկախ է Համաշխարհային բանկի մյուս կազմակերպություններից, որոնց, սակայն, նա երբեմն դիմում է որոշ ծառայությունների համար:

Ռեսուրսների ձևավորումը

Գործակալության ռեսուրսները ձևավորվում են անդամ-երկրների բաժանորդագրական կապիտալից: Կանոնադրական կապիտալը բաղկացած է 100,000 բաժնետոմսից, որից 1999 թ. հունիսի 30-ի դրությամբ բաժանորդագրված էր 98,682 բաժնետոմս՝ շուրջ 1,068 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ: Յուրաքանչյուր բաժնետոմս ունի 10,000 ՍԴՌ անվանական արժեք, որը հաշվարկվում է 1981 թ. հունվարի 1-ից մինչև 1985 թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլար/ՍԴՌ միջին փոխարժեքով (1.082 ԱՄՆ դոլար): Համաձայն Գործակալության կոնվենցիայի՝ յուրաքանչյուր անդամ-երկիր սկզբնական շրջանում վճարում է իր անդամակցության վճարի 20 %-ը, որից 10 %-ը պետք է վճարի կանխիկ, ազատ փոխարկելի արտարժույթով*, իսկ մյուս 10 %-ը՝ Կառավարության պարտամուրհակներով, որոնք պետք է լինեն ոչ փոխանցելի, ոչ տոկոսաբեր և վճարելի իրենց անվանական արժեքով: Այս պարտամուրհակներն արժեզրկվում են ազատ փոխարկելի արժույթներով և անդամ-երկրի կողմից ենթակա են վճարման, երբ Գործակալությունն իր պարտավորությունները շտապ մարելու համար ֆինանսական միջոցների կարիք ունենա:

1999 թ. հունիսի 30-ի դրությամբ Գործակալության առաջնահերթ վճարման ենթակա բաժնետիրական կապիտալից վճարված էր շուրջ 215 մլն ԱՄՆ դոլար, իսկ մնացած 853 մլն ԱՄՆ դոլարը Գործակալությունը կարող է պահանջել իր պարտավորությունների շտապ մարման անհրաժեշտության դեպքում: Առաջնահերթ վճարված գումարից շուրջ 100 մլն ԱՄՆ դոլարը վճարված է ոչ փոխանցելի, ոչ տոկոսաբեր ցպահանջ պարտավորագրերի ձևով:

Գործակալության ռեսուրսների համալրման աղբյուր է նաև ՎԶՄԲ-ի ֆինանսական աջակցությունը: Յուրաքանչյուր տարի նա իր հավելուրդից Գործակալությանը՝ որպես դրամաշնորհ, փոխանցում է որոշակի գումար (այսպես, օրինակ, 1998 թվականի ապրիլի 6-ին փոխանցել է 150 մլն ԱՄՆ դոլար), որը համալրելով Գործակալության կապիտալ ռեսուրսները, նպաստում է նրա ֆինանսական դիրքի ամրապնդմանը:

Գործակալության երաշխիքային ծրագրերը և պոտենցիալ պարտավորությունները

Գործակալությունը ներդրողներին առաջարկում է երաշխիքներ կամ ապահովագրում ոչ առևտրային ռիսկերի արդյունքում առաջացող կորուստներից: Գործակալությունը ներդրումներն ապահովագրում է մինչև 20 տարի ժամկետով: 1999 թ. հունիսի 30-ի դրությամբ Գործակալությունը տրամադրել էր 5.5 մլրդ ԱՄՆ դոլարի երաշխիքներ, այդ թվում՝ 1999 թվականի ֆինանսական տարում՝ 1.3 մլրդ ԱՄՆ դոլար:

Գործակալությունը երաշխավորում է ներդրողներին.

- տվյալ երկրում ներդրումային ծրագրերի լիկվիդացումից հետո ազգային արժույթով արտահայտված նրանց հասույթները և եկամուտները կփոխարկվեն ազատ փոխարկելի արտարժույթի և կփոխանցվեն տվյալ երկրից դուրս,
- տվյալ երկրի կառավարության քաղաքականության խստացման արդյունքում* ներդրողները չեն զրկվի այդ երկրում իրենց սեփականության իրավունքից,
- քաղաքացիական խռովությունների և պատերազմի դեպքում նրանց իրական ակտիվները կպաշտպանվեն վնասվելուց կամ կորստից,

---

** Այս հարցում բացառություն են կազմում մի շարք զարգացող երկրներ, որոնց թույլատրվում է 10 % բաժնեմասի 1/4 մասը վճարել ազգային արժույթով:*

** Կառավարությունը կարող է կրճատել, սահմանափակել կամ վերացնել սեփականության և ապահովագրված ներդրումների նկատմամբ իրավունքները:*

- եթե տվյալ երկիրը խախտի միջազգային գործարքի (պայմանագրի) պայմանները, ապա Գործակալությունը նրանց կօգնի արբիտրաժային կամ իրավաբանական որոշմամբ հասնել տվյալ երկրի կողմից պարտավորության խախտման ճանաչմանը:

Ներդրողները կարող են ապահովագրել իրենց ծրագրերը վերոնշյալ ռիսկերից՝ ցանկացած համագործակցությամբ: Առաջին երեք տարիների ընթացքում Գործակալության կողմից տրված երաշխիքները, բացի վերաապահովագրություններից, հնարավոր չէ միակողմանիորեն դադարեցնել:

Գործակալության երաշխիքային պայմանագրերի կնքման ժամանակ կիրառվում են բարձր փոխարժեքներ, որոնք ամրագրվում են 5 տարվա համար: Համաձայն Գործակալության երաշխիքային պայմանագրերի՝ ներդրողներին վճարվող բոլոր կարգի կորուստների փոխհատուցման վճարները չեն կարող գերազանցել երաշխավորված առավելագույն գումարը:

Գործակալությունը ՎՋՄԲ-ին ամեն տարի կատարում է սպասարկման և աջակցման վճարներ:

Հայաստանի Հանրապետության և Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալության փոխհարաբերությունները

1999 թվականի հունիսի 30-ի դրությամբ Գործակալության կանոնադրական կապիտալում Հայաստանի բաժնեմասը կազմում է 80 բաժնետոմս՝ 866,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Պարտադիր առաջնահերթ վճարման ենթակա է 173,000 ԱՄՆ դոլարը (20 %), իսկ մնացած 693,000 ԱՄՆ դոլարը Հայաստանի կողմից պետք է վճարվի Գործակալության պահանջի դեպքում: 1999 թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունը Գործակալությանը տրամադրել է (1995 թ. սեպտեմբերի 12-ին) մեկ պարտամուրհակ՝ 85,560 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Հայաստանի քվեների թիվը կազմում է 257 ձայն, որն ընդհանուր քվեների թվի 0.21 %-ն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վարկային համաձայնագիր (Ինստիտուցիոնալ կառուցման ծրագիր) ՀՀ կառավարության և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջև, 1993 թ. ապրիլի 7:
2. Զարգացման վարկային համաձայնագիր (Աղետի գոտու վերականգնման ծրագիր) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1994 թ. փետրվարի 18:
3. Զարգացման վարկային համաձայնագիր (Ոռոգման համակարգի վերականգնման ծրագիր) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1994 թ. հոկտեմբերի 20:
4. Զարգացման վարկային համաձայնագիր (Էներգահամակարգի օժանդակության ծրագիր) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1994 թ. դեկտեմբերի 23:
5. Զարգացման վարկային համաձայնագիր (Վերականգնողական վարկ) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1995 թ. մարտի 1:
6. Զարգացման վարկային համաձայնագիր (Մայրուղիների վերկանգման ծրագիր) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1995 թ. հոկտեմբերի 2:
7. Զարգացման վարկային համաձայնագիր (Սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագիր) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1995 թ. նոյեմբերի 15:
8. Զարգացման վարկային համաձայնագիր (Կառուցվածքային բարեփոխումների վարկ I) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1996 թ. մարտի 4:
9. Զարգացման վարկային համաձայնագիր (Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության ծրագիր I) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1996թ. մարտի 4:
10. Զարգացման վարկային համաձայնագիր (Կառուցվածքային բարեփոխումների վարկ II) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1997 թ. սեպտեմբերի 2:
11. Զարգացման վարկային համաձայնագիր (Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության ծրագիր II) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1997թ. օգոստոսի 26:
12. Զարգացման վարկային համաձայնագիր (Կառուցվածքային բարեփոխումների վարկ III) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1998 թ. դեկտեմբերի 23:
13. Զարգացման վարկային համաձայնագիր (Ձեռնարկությունների զարգացման ծրագիր) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1996 թ. դեկտեմբերի 27:
14. Զարգացման վարկային համաձայնագիր (Համայնքային զարգացման ծրագիր) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1998 թ. հունիսի 19:
15. Զարգացման վարկի համաձայնագիր (Առողջապահության ֆինանսավորում և դրա առաջնային պահպանման զարգացման ծրագիր) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1997 թ. սեպտեմբերի 2:
16. Զարգացման վարկի համաձայնագիր (Կրթության ֆինանսավորման և կառավարման բարեփոխման ծրագիր) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1998 թ. փետրվարի 4:
17. Զարգացման վարկի համաձայնագիր (Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագիր) ՀՀ կառավարության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև, 1997 թ. դեկտեմբերի 12:
18. Զարգացման վարկային համաձայնագիր (Ոռոգման համակարգի վերականգնման ծրագիր) ՀՀ կառավարության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջև, 1995 թ. հունիսի 14:
19. Վարկային համաձայնագիր (Հյուսիս-արևմտյան գյուղատնտեսական ծառայությունների վարկ) ՀՀ կառավարության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջև, 1997 թ. դեկտեմբերի 5:
20. The World Bank Annual Report 1999. Manufactured in the United States of America. - 352p.

21. International Bank for Reconstruction and Development. Financial Statements June 30,1999. – 40p.
22. Management's Discussion & Analysis and Condensed Quarterly Financial Statements of the International Bank for Reconstruction and Development June 30,1999. -14p.
23. International Development Association. Special Purpose Financial Statements June 30,1999. -26p.
24. Condensed Quarterly Financial Statements of the International Development Association and Interim Trust Fund June 30,1999. -12p.
25. Quarterly Financial Statements of the International Financial Corporation June 30,1999. -10p.
26. Quarterly Financial Statements of the Multilateral Investment Guarantee Agency June 30,1999. -14p.

Հավելված 1

ՎԶՄԲ և Զարգացման միջազգային ընկերակցության կողմից նախկին ԽՍՀՄ հանրապետություններին ցուցաբերած ֆինանսական աջակցությունը

(1998 թ. հուլիսի 1-ից մինչև 1999 թ. հունիսի 30-ը)

Երկիր	Ընդամենը ստորագրված պայմանագրեր ՎԶՄԲ/Ընկերակցություն	Գումարը (մլն ԱՄՆ դոլար) ՎԶՄԲ/Ընկերակցություն
Հայաստան	*- / 4*	*- /120.6*
Ադրբեջան	*-*	*-*
Վրաստան	*- / 7*	*- / 136.6*
Ռուսաստանի Դաշնություն	*3 / -*	*1930.0 / -*
Ուկրաինա	*2 / -*	*600.0 / -*
Բելառուս	*-*	*-*
Մոլդովա	*- / 3*	*- / 66.1*
Էստոնիա	*-*	*-*
Լատվիա	*4 / -*	*58.6 / -*
Լիտվա	*1 / -*	*20.1 / -*
Ղազախստան	*4 / -*	*175.5 / -*
Ուզբեկստան	*2 / -*	*55.0 / -*
Ղրղզստան	*- / 3*	*- / 61.5*
Թուրքմենստան	*-*	*-*
Տաջիկստան	*- / 5*	*- / 93.4*
Ընդամենը	*16 / 22*	*2839.2 / 478.2*

Հավելված 2

ՎԶՄԲ և Զարգացման միջազգային ընկերակցության կողմից նախկին ԽՍՀՄ հանրապետություններում իրականացվելիք ծրագրերը, որոնք հավանության են արժանացել 1999 ֆինանսական տարում[*]

1999 թ. հունիսի 30-ի դրությամբ

(*մլն ԱՄՆ դոլար*)

Երկիր	Գյուղատնտեսություն	Կրթություն	Էներգետիկա	Շրջակա միջ. պահպանություն	Ֆինանսներ, բիզնես	Առողջապահություն	Արդյունաբերություն	Բազմահատվածային (SAC)	Ենթակառուցվածքների վերակառուցում	Սոց. ծառայություն	Տրանսպորտ	Քաղաքային տնտ.	Ջրամատակարարում	Ընդամենը
Հայաստան	26.6		21.0	8.0				65.0						120.6
Ադրբեջան	30.0	5.0						7.0		7.5		20.0		69.5
Վրաստան			25.0	5.4			15.0	76.5	15.7					137.6
Էստոնիա														-
Լատվիա	10.5	31.1				12.0			5.0					58.6
Լիտվա												20.1		20.1
Ռուսաստան								1500.0	30.0		400.0			1930.0
Ուկրաինա					300.0		300.0							600.0
Բելառուս														-
Մոլդովա									40.0	15.0				55.0
Ղրղզստան	25.0									36.5				61.5
Թուրքմեն.														-
Տաջիկստան	20.0	5.0							63.4		5.0			93.4
Ուզբեկստան						30.0			25.0					55.0
Ղազախստան						42.5			16.5		100.0		16.5	175.5

[*] *«Համաշխարհային բանկի տարեկան հաշվետվությունը» (անգլ.) 1999, էջ 155-185:*